

ՁԱՎԱՐ/ՀԱՃԱՐ ԲԱՌԵՐԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՂԵՐՄՆԵՐԸ՝ ԸՍՏ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
Քումունց Մ. Ս.

Սյունիք-Արցախի բարբառային տարածքում հանդիպող հիմնական բուսանունները հիշատակվում են նաև հին հայերենի բնագրային սկզբնաղբյուրներում: Մատենագրական տեղեկությունները, օտար լեզուներում առկա ձևերը և հայերենի բարբառային տվյալները հնարավորություն են տալիս ոչ միայն քննելու **ձավար** և **հաճար** բառերի ձևիմաստային ընդհանրությունները, այլև նրանց առնչակից այլ բառեր:

Պարզվում է, որ Սյունիք-Արցախի բարբառային տարածքում գործածվող **ծափալի** (ձավար) բառը տարածված է ոչ միայն հայերենում, այլև հարևան լեզուներում: Կարծում ենք՝ **հաճար** արմատի դրափոխությամբ է առաջ եկել **ձավար** բառը, որոնց հիմքը գալիս է հնդեվրոպական մայր լեզվից՝ ***ad-io-/*aud-io** «հացահատիկ» արմատից:

Բանալի բառեր. ձավար, բլդուր, հաճար, ցորեն, հատիկ, կորկոտ, ստուգաբանություն, մատենագրություն, Սյունիք-Արցախի բարբառային տարածք, հնդեվրոպական, դրափոխություն:

Սյունիք-Արցախի բարբառային տարածքում պահպանված բուսանունների մեծ մասը հանդիպում է հին հայերենում, իսկ դրանցից մի քանիսը աղերսներ ունեն հնդեվրոպական ցեղակից լեզուների հետ: Ժամանակի ընթացքում տարբեր փոփոխությունների երթարկվելով հանդերձ՝ բարբառախմբում պահպանվել են բառեր և բառային իմաստներ, որ մասամբ կամ ամբողջական տեղեկություններ են հաղորդում բառերի պատմական զարգացման վերաբերյալ:

Բարբառային տվյալների համաժամանակյա և տարժամանակյա ուսումնասիրությամբ ստուգաբանական փորձ է արվում **ձավար** բառի շուրջ: Կարծում ենք՝ միայն գրական լեզվի պաշարը բավարար չէ հանգամանակից բառաքնություն անցկացնելու համար: Ուստի

բարբառախմբում պահպանված բառի ձևիմաստային դրսևորումների ամբողջական քննությունը, այլև մատենագրական տեղեկություններն ու այլ լեզուների հետ համեմատությունը կարող են օգտակար լինել **ձավար** բառի և նրան ձևով և իմաստով աղերսվող մյուս անունների՝ **հաճար**, **կորկոտ** և այլն, ստուգաբանության համար:

1. **Վկայակոչումներ:** **Չավար** բառը վկայվում է ՆՀԲ-ում «խոշոր աղացած, խաշած ցորեն, հաճար կամ գարի» [5, 148]: ԱԲ-ն միասին է դնում **ձաւար** և **բլղուր** բառերը [4, 516]:

«Գիրք վաստակոց»-ում նշվում է **«ձաւար արա»՝ ձավար անել**. «...եւ զգարին *ձաւար արա*, եւ կարագով մնշեա, եւ լօշ ան ի ներք, եւ տուր...», «Յաղագս զմատղաշն սնուցանելոյ»՝ **ձաւար (գարի)՝ աղացած գարի**. «...յետ վեցաւոր *ձաւար գարի* տուր» [7, 207] (ընդգծումները մերն են՝ Մ. Ք.):

Մատենագրական այլ տվյալներ չեն հանդիպում, բնագրերից վկայություններ չկան նաև գրաբարյան բառարաններում [13, 444] [կան որոշ բառեր, որ հնչյունական կազմով և իմաստով աղերսներ ունեն քննվող բառի հետ: Օրինակ՝ Ն. Հովհաննիսյանը XII-XVII դդ. վկայված ձեռագիր բառարաններից առանձնացրել է **ծիրեալ** բառը. «Օիրեալ. ծմրեալ. ծնգ/կեալ. ճնշեալ. մաշեալ. հիւծեալ. հաշեալ. քամեալ. նուաւո/զ (ել)», որ չենք կարող նախապես ընդհանրացնել քննվող բառի հետ [11, 36]: Իսկ ահա XVIII դ. նույնանիշների ձեռագիր բառարանում հանդիպում է **ծիւ ծիւ առնել**՝ «Ղարաբաղի բարբառում «պատառոտել» իմաստով» (հղում է կատարում Հ. Աճառյանին): Հոդվածում առաջադրված հարցը, թե **«ծիւ ծիւ անել** և **ծիլ ծիլ անել**՝ «պատառոտել, մաս-մաս անել», իմաստները ո՞ր բարբառում են գործածվում» [12, 34-35], կարելի է լուծված համարել Գորիսի բարբառի տվյալների առկայությամբ. **ծիվ[ւ]-ծիվ[ւ] անել** (Շին. և այլուր)|| **ծիլ-ծիլ անել**, այլև՝ **ծէվ-ծէվ անել** «պատառոտել, մաս-մաս անել» իմաստներով հարադրական տարբերակները գործածական են (հնարավոր է բարբառային **ծիվիլ** բառի հնչյունափոխ տարբերակներ են): Թերևս սրանց ձևով և իմաստով աղերսակից է **ծեղ-ծեղ անել** բառը, որ գործածվում է «փայտը, քարը մաս-մաս անել, ճղել» իմաստներով, որ նշված է նաև Ա. Մարգարյանի կազմած բառացանկում՝ **ծրղան** «կացնով շերտ-շերտ կտրած փայտ՝ ճղոն» (Արց. նաև՝ «խոտի չորուկ, հարդ»), **ծրղանել** «փայտը ճեղքել, ճղոն անել» [14, 406]: Բարբառումս **ճղել** և **ծղել** բառերը գրեթե նույն իմաստով են գործածում, հմմտ.՝ **ճղած** կամ **Օղած քար**՝ Տաթևի ջրանցի հայտնի արձանագրությունը (այս մասին կարելի է տեսնել՝ [24, 227]):

Բառի բացատրության թերևս առաջին փորձը հանդիպում է Ա. Բագրատունու՝ Վերգիլիոսի («Մշակականք») թարգմանության մեջ. «...արդ առ ի ցանել ցորեան և աշտիպ, որ է ձաւար...» [22, 15]՝ «աշտիպ» (հմմտ. **աշտուճ** «ցամաք հաց»), որ Հ. Աճառյանը համարում է «անգոյ բառ» [2, 222]: Թարգմանական բնույթի աշխատություններում նույնպես հանդիպում է **ձավար** || **ձաւար**, որ համապատասխանեցվում է անգլ. **Groat-ին** (հմմտ. **groats** «ձավար») «1. ծանրության չափ, որ հավասար է մեկ կամ կես գարեհատի, 2. երեմուկ, ձավար» [15, 321]: Ֆրանս. թարգմանության մեջ **gruau** («1. ձավար, 2. բարձր որակի ալյուր») նշվում է «փեճեկնին հանուած ու խոշոր աղացած վարսակ՝ ցորեն, գարի» [6, 494]: Ռուս. **Обрумятъ** – ը թարգմանվել է «թեփը հանել, ձաւար անել» [28, 624]: «Էրկանք» բառի բացատրություններից մեկում հանդիպում ենք. «կարծրաքարէ գոյգ մը տափակ ու բոլորչի քարեր *ձաւար*, վիկ մանտրցնելու ծառայող» [17, 120]:

2. Բարբառային և օտար սովյալներ: Հայերենի բարբառներում տարածված է ձավար-ը՝ «1. թեփահան արած ցորեն, 2. կովերի համար աղացած գարի» [9, 320] իմաստներով: ՀԱԲ-ի «Գավառական» բաժնում կարևոր տեղեկություններ կան. «Մրանից են ձաւար անել «շատախոսել, դատարկաբանել», ձաւար հաւաքել «բամբասել», ձաւար ձաւար դուրս տալ «ցնդաբանել», ձաւրել «ցնորիլ», ձավրտել «մեծ մեծ խօսիլ»» [2, 147]: Այս վերջին ձևերը տրված են նաև «Հայերէն գաւառական բառարանում», որոնց գործածությունը դրվում է Երևանի խոսվածքում: Նույն տեղում ձավ[ւ]րտել «մեծաբանել» տրված է հարցականով՝ [?]: Նշվում է նաև «ձավարի ցորեն»՝ «տեսակ մը բարակ ու նիհար ցորեն», որ գործածվում է Արցախում [1, 681]: Արարատյան բարբառում «ծեծած ցորեն» բառի փոխաբերական գործածություններն են ձաւար անել «վայրախոսել», իրար երախից ձավար հավաքել «իրար հետ անտեղի վիճաբանել» [16, 69]: Բարբառային բառի բացատրությանը հանդիպում ենք դեռևս 19-րդ դարի վերջերին. «Եփած ձաւարը (պարսկահայերը անուանում են նրան եփուն ձաւար) պատրաստում են նոյնպէս ցորենից» [8, 200]: Գործում ծավաւր ասում են ցորենի մի տեսակին, այստեղից՝ ծավաւր>ծիվաւրել՝ «Հի՞նչ էս ծիվաւրո՞ւմ անում», «Տո՞ւ արթէն ծիվաւրո՞ւմ էս անում», գործածվում է «շատախոսել, խոսքը անօգուտ երկարացնել» իմաստներով: Համանուն է կազմում ծըվարել բառի հետ. «Ապարոշիդ մեջ կանանչ, / Իբրև իժի *ծըվարում*. / Ալփասլանի հոգին ըզքեզ կը պսակէ...» (Դ. Վարուժան, «Ձարդը», Դ.):

Չավար բառին հոմանիշ են կորկոտ, աշտիպ [21, 677], բլդուր բառերը: Այս վերջինը լայն տարածում ունի Մերձավոր Արևելքում [25, 27-37] (պրսկ. *jou* /جو/ բառի հետ ունեցած ընդհանրությունները չեն որոշակիացնում լեզվական պատկանելությունը), այլև հայերենում, որ, հնարավոր է, պրսկ. փոխառություն է (նշվում է թուրք. փոխառությունների շարքում՝ չնշելով փոխատու և միջնորդ լեզուները [29, 238])՝ *bālğur* /لغور/, արաբ. *bārğul* /لغر/, թուրք. *bulgur* || *bulğur*, վրաց. *burghuli* /ბურღული/ և այլն: Սյունիք-Արցախ բարբառախմբում այն նոր բառ է: Այսօրվա կենցաղում ձավար անվանում են «եփած և թեփահան արված» ցորենը, բլդուր՝ «եփած, կոտրած կամ աղացած ցորեն»: Հ. Աճառյանի՝ Արցախում վկայած «*պլդորտել» [1, 912] բառը՝ «ամպերի կույտ-կույտ հավաքվելը անձրև տեղալու համար», կարծում ենք, ձևավորվել է ոչ թե բլդուր բառի՝ «խաղողի և թթի հասունացած խյուսը» իմաստից, այլ պիրտօղ || պըլտօղ || պոլտօղ || պոլրտօղ=պղտոր արմատի գորացական իմաստով բաղադրությունից:

Հայերենի ոչ վաղ վկայությունները և պարսկերենի հետ ունեցած աղերսները ենթադրել են տալիս, որ **ձավար** բառը հին շրջանի բարբառային փոխառություն է, որ պահպանել է ոչ մասնավոր իմաստը՝ «հատիկ, հացահատիկ»: Բայց ավելի հավանական է, որ այն ընդհանուր բառ է տարածաշրջանի ժողովուրդների համար, հմմտ. քրդ. *savar* «ձավար (նաև՝ ինչ-որ ճաշատեսակ [23, 531]), բլդուր», թուրք. *çavdar* (ընդ որում՝ թուրք. **çavdar** նշանակում է «աշորա, տարեկան», բայց Հ. Աճառյանը մամուլից առանձնացնում է նաև թուրք. բարբառային ձևերը՝ Կես. S. և այլն՝ **zavar** «ձաւար» [2, 148]), կամ «բլդուր», վրաց. *čvavi(s)* /ჭვავის/ «տարեկան», Գորիսում **ծավալ** «հաճար»: Վերջինս կապակցության մեջ նույնպես գործածվում է «շատախոսել, խոսքը երկարացնել» իմաստներով՝ **հրճարին անել**, Արցախում սրան գուգահեռ՝ **հրճարեն անել/անել**, իմաստն արտահայտվում է նաև **կարկուտ** բառի բաղադրությամբ՝ **լըվըկարկուտ անել** «արագ-արագ խոսել» [20, 245]: Պետք է նկատել, որ **հատիկ** բառը Գորիսում առավելապես ընկալվում է «հացահատիկ, ցորեն» (Արցախում առավելապես գործածական է ցորեն [8, 488]), այլև **հատ**, **հատիկ**՝ առանձին գործածությամբ և տարբեր կազմություններում: **Հատիկ** բառի «ցորեն» իմաստին համանիշ է **կօտ** բառը՝ «կոտրատված հացահատիկ, կենդանիներին տրվող հատիկ» (Արցախում գործածվում է նաև **դան** || **դանա**՝ «հատիկ, կուտ» (< *danā* /دانآ / «1. հատիկ, հատ, 2. սերմ, 3. կորիզ, 4. կաթիլ, 5. փաթիլ, 6. հատիկ»): Սյունիք-Արցախ բարբառախմբի **դընըկալել** || **դընըկալիլ** «լոբու, այլև՝ ցո-

րենի, գարու պատիճը հատիկավորվելը, հատիկների հասունանալ»բառը, կարծում ենք, հենց այդ արմատից է): Հին աղօթք, երկրպագության խոսք է պահպանվել. «Ծեթա, նօթա, **հատիկը** չօր, կ'արին կեճ, թօռ կ'ա՛ տափերը նրմանա, **հատիկը**, կ'արին բուլանա, խօխան օտի մրճանա»: Գարի, ցորեն և հացահատիկային այլ բույսեր **ձավար** անվանմամբ չեն գործածվում:

3. Ծագումնաբանական հարցեր: Գալով բառի ծագման հարցին՝ նկատենք, որ, այնուամենայնիվ, ստուգաբանական, բառաքննական աշխատանքներում հստակեցված չեն արմատի արտաքին կազմի և իմաստի հարցերը: Յ. Պոկոռնին նշում է «հացահատիկ», մասնավորապես «գարի» [27, 512]՝ առանց հայերեն տարբերակի վկայության: Հ. Աճառյանը բառի ծագումը ըստ էության թողնում է առկախ, ներկայացնում է այլոց մեկնությունները, որոնցում արմատի ծագումը աղերսվում է **ցորեն** բառի հետ՝ սանսկ. *yava*, պրսկ. *jav* «գարի», հուն. *ζεία* «ցորեն» և այլն [2, 147]: Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմության» մեջ չի անդրադառնում **ձավար** բառին, բայց ՀՄԲ-ում այն համարում է թերևս հ.-ե. ծագման՝ «*iuo-՝ *ieuo-«հացահատիկ, գարի, կորեկ, լիսով. *javai* «հացահատիկ» հիմքից՝ նախադիր *i>*j>ձ անցմամբ [19, 474]:

4. Եզրակացություններ: Նկատի առնելով հայերենի բարբառներում հանդիպող գյուղատնտեսության բնագավառի բառերի ընդհանրությունները հնդեվրոպական ցեղակից լեզուների հետ՝ առավել հավանական է, որ նաև Սյունիք-Արցախի բարբառային տարածքում պահպանված լինեն խիստ հաճախակի գործածություն ունեցող անունները՝ «խոփ, ունդ, ցորեն, աղորիք, ակոս, գարի, կորեկ» [26, 119]: Կարծում ենք՝ այդ բառերից է նաև **ձավար** բառին հոմանիշ **կորկոտ**-ը (Սյունիքում առավելապես հանդիպում է Կապանում, Մեղրիում)՝ «ծեծած և թեփը հանած ցորեն կամ գարի», Սյունիք-Արցախում՝ **կուրկուտ**. Հ. Աճառյանը հավանական է համարում բառի հնդեվրոպական ծագումը. «g²rod- արմատից, որ կրկնությամբ տվել է նախ *կոկրոտ և տեղափոխությամբ՝ կորկոտ, ինչպես կարկուտ<*կակրուտ<հնիւ. g²ag²rōdo-» [2, 650]: Գ. Ջահուկյանը **կորկոտ**-ը նույնպես համարում է հ.-ե. ծագմամբ՝ *gogrod-՝ *gred- «քորել, քերել» արմատից [19, 424]: Հ. Աճառյանը մանրամասն ներկայացրել է ցեղակից լեզուներում **կորկոտ** բառի ձևիմաստային աղերսները՝ «հատիկ, կորկոտ» և այլ իմաստներով [2, 650]:

Անդրադառնալով **ձավար**|| **ձաւար** բառի՝ գրավոր և բարբառային աղբյուրներում եղած տվյալներին՝ նկատում ենք, որ նրա երկրորդային իմաստը՝ **ձավար անել**, **ձավարել** «մանրացնել, հատիկ դարձնել», Սյունիքում՝ **ծիվաճիլ**, **ծաճիլ անել**, «խոսքը մանրացնել, երկարացնել», եղել է առաջնային, որից էլ ձևավորվել է «աղացած հատիկ» իմաստը, որ հետագայում հիմնական իմաստն է դարձել: Ընդ որում՝ այդ նույն կիրառությունն ունի **կորկոտ անել** || **կըրկոտել** «շատախոսել», այլն՝ «հատիկը կեղևահան անել, ձավար անել»: Կարծում ենք՝ **ձավար** բառի քննության համար ելակետ պետք է վերցնել «հատիկ, ցորենի մի տեսակ» իմաստները, որոնցից թերևս Սյունիքում պահպանվել է **ցորենի բարակ և կարմրավուն մի տեսակը՝ ծաճիլը**: Նույնը թերևս **կորկոտ** բառի համար՝ **կորկոտ** կամ **կուրկուտ<կոտ-կոտ** «հատիկ-հատիկ», ապա դրափոխությամբ՝ **կօրկօտ** || **կուրկուտ**:

Իմաստային քննությունը թույլ է տալիս հակվելու այն կարծիքներին, որ **ձավար** և **կորկոտ**, համապատասխանաբար՝ **ծաճիլ**, **կուրկուտ**, բառերն ունեն հնդեվրոպական աղերսներ: Դրանցից **ձավար** բառը հայերենի տարբերակներում տարածվել է «առհասարակ մանրացրած բուսահատիկ» իմաստով, Գորիսում պահպանվել է նեղ իմաստը՝ «հացագլխերի ցեղի մի տեսակի անուն»՝ **(հ)աճար**, որն էլ ձևիմաստային զուգահեռներն ունի կովկասյան լեզուներում, հմմտ.՝ **ճուարի**, **ճվավի**, **դզվարի**, **աճա**, **աճարաձ** – **հաճար** (հմմտ.՝ պրսկ.՝ *čavdar* /چاودار/ «աշորա, տարեկան» [2, 15]): Ս. Գրքում հանդիպող **հաճար** (-ոյ հոլ.) բառի իմաստները նույնպես նշում են կոնկրետ ցորենի մի տեսակ՝ «Եւ ցորեանն եւ *հաճար* ոչ հարան, զի անագան էին» (Ելք 9³²), «Եւ ահա ի սնարից նորա նկանակ *հաճարոյ* եւ կուժ ջրոյ» (Գ Թգ 19⁶), «կորեակ եւ *հաճար* ի սահմանս իւր» (Ես 28²⁵), «ոսպն եւ ոլոռն եւ կորեակ եւ *հաճար*» (Եզկ 4⁹), որ Գ. Ջահուկյանը համարում է «թերևս հնդեվրոպական՝ ***ades/*ados-** «հաճար», նախաձևի ***ad-** արմատից՝ ***-io-** ածանցով» [19, 440], որ անցել է կովկասյան ձևերին:

(**Z<j>աճ-ար**՝ ***ad-io-**, և **ձաւ-ար**՝ ***iuo-** (***ieuo-** || ***ieuo-**) ձևերը զուգահեռելիս խնդիր է առաջանում Գ. Ջահուկյանի առաջարկած ***i>*)>ձ** [19, 474] անցման շուրջ:

Առաջարկում ենք հարցին նայել ***ad-** արմատի դրափոխված ձևով՝ ***da-** **աձ>ձա**, որոնք հետագայում ինքնուրույնաբար զարգացել են՝ բառային տարբերակներից վերածվելով առանձին իմաստներով աղերսակից բառերի: Հետագայում **ձաւար**-ը ենթարկվել է **-ի-ա** հոլովման, որի հնարավոր ազդեցությամբ ոչ վանկարար [18, 117] և

ձայնակապն է առաջացել՝ **ձա-ւար** > ***ad-io-/*aud-io** (հմմտ.՝ լատ. **ador** «հաճար» (լատինական զուգահեռը օրինակը քաղել ենք **Գ. Ջահուկյանից** [19, 440]) = բրբ. **ծըվարի** || **ծիվաւրի** || **ծաւլաւրի**: Կարելի է լուծված համարել նաև հ.-ե. ***dh (>ճ)>*gʰ (ձ>ճ)** անցման հարցը. հմմտ.՝ **աղանձ, խինդ, (խնծիդ || խնձիդ)** և այլն [3, 538]:

Այսպիսով՝ **(h)աճար**՝ «ցորենի մի մանր տեսակ», բառի ձևիմաստից առաջ է եկել **ձավար**՝ «մանրացրած ցորեն կամ գարի» (**գարի** բառի ծագման վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Մ. Ֆասմերը և ուրիշներ «*aṛk-» «թեքել, ծռել» իմաստի ներքո են դնում [29, 571-572]) **կորկոս**, իսկ Սյունիք-Արցախի բարբառային տարածքում պահպանվել է բուն իմաստը՝ **(h)աճար** «ցորենի մի տեսակ», հմմտ.՝ գերմ. **getreide** «հացահատիկ», **getreideart** «հատիկաբույս», գոթ. **atisk (*ades-ko-)** «ցանքս, հատիկի ցանքս», հմմտ.՝ հայ. **ածիկ** և **հատիկ** և այլն, որ բոլորը ծագում են հ.-ե. ***ades-** կամ ***ados-** [27, 45] «հացահատիկ» արմատից:

ИНДОЕВРОПЕЙСКИЕ ВЗАИМОСВЯЗИ СЛОВ ПШЕНИЧНАЯ КРУПА / РЖАНОЙ В СООТВЕТСТВИИ С ДИАЛЕКТНЫМИ ДАННЫМИ

Кумунц М. С.

Основные названия растений на территории диалектов Сюник-Арцах встречаются также в древнеармянском языке.

Считаем, что с помощью библиографической информации, форм, существующих в иностранных языках, и диалектных данных возможно изучить сходства форм и значений слов **дзавар (пшеничная крупа)** и **ачар (ржаная крупа)**, а также других схожих слов.

Оказывается, что слово **ծաւլաւր** (**пшеничная крупа**), который используется на территории диалектов Сюник-Арцах, распространено не только в армянском, но и других языках. Считаем, что слово **пшеничная крупа** возникло в следствие видоизменений корня **ржаной**, основа которых лежит в индоевропейском языке: в корне ***ad-io-/*aud-io** «зерно».

Ключевые слова: пшеничная крупа, булгур, ржаной, зерно, гранула, трещины пшеницы, этимология, библиография, территория диалектов Сюник-Арцах, индоевропейский, видоизменение.

SUPPLICATIONS OF THE WORDS CLEANSED WHEAT / RYE
ACCORDING TO DIALECTICAL DATA

Kumunts M. S.

The main plant names in the Syunik-Artsakh dialectical area are also found in Old Armenian.

Let's assume that with the help of bibliographic information, forms in other languages and dialectical data it is possible to examine not only formal and meaningful generalities of words **dzavar** (cleansed wheat) and **hajar** (rye), but also other correlative words.

It turns out that word "**ծափլափ**" (cleansed wheat) used in Syunik-Artsakh dialectical area is spread not only in Armenian language but also in neighbouring languages.

We think that the word **cleansed wheat** originated from the change of the word **rye**, which derives from Indo-European root ***ad-io-/*aud-io**, "**grain**".

Keywords: cleansed wheat, bulgur, rye, wheat, grain, cracked wheat, etymology, bibliography, Syunik-Artsakh dialectical area, Indo-European, change of position.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառեան Հ. Հայերէն գաւառական բառարան: Թիֆլիս: Լազարեան ճեմարան: 1913: 1178 էջ:
2. Աճառյան Հր. Հայերէն արմատական բառարան: Երևան: Երևանի համալսարանի հրատ.: 1926: հատ. Ա: 700 էջ:
3. Աճառյան Հ. Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզուների: Երևան: ԳԱ հրատ.: 1971: հատ. VI: 846 էջ:
4. Ալգերեան Մ.: Ճելալեան Գ. Առձեռն բառարան հայկազեան լեզուի: Վենետիկ: Սուրբ Ղազար: 1865: 856 էջ:
5. Աւետիքեան Գ. Միրմելեան Խ. և ուրիշ.: Նոր բառգիրք հայկազեան լեզուի: Վենետիկ: Տպարան ի Սրբոյն Ղազարու: հատ I: 1836: 2235 էջ:
6. Գիրք վաստակոց: Վենետիկ: Վանք Մխիթարա ի Ս. Ղազար: 1877: 264 էջ:
7. Դավթյան Կ. Ս. Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը: Երևան: ԳԱ հրատ.: 1966: 503 էջ:

8. Զեմլինսկի Ս. Բոյսերի գործածությունը Երևանի նահանգում: Թիֆլիս: Տպ. Մարկիանոս Դ. Ռոտինյանցի: 1899: 28 էջ:
9. Հայոց լեզվի բարբառային բառարան (ՀՀ ԳԱԱ Հրայրա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ): Երևան: «Գիտություն»: 2010: Հատ. 3: 427 էջ:
10. Հովհաննիսյան Ն. Հայերենի հոմանշային շարքերի համադրական քննության փորձ // Լրաբեր հասարակական գիտությունների: Երևան: 2005: Թիվ 1: էջ 29-39:
11. Հովհաննիսյան Ն. Բարբառային իրողություններ XVIII դ. նույնանիշների ձեռագիր բառարաններում // Բանբեր Երևանի համալսարանի: Երևան: 2016: Թիվ 2 (20): էջ 32-38:
12. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Ս. Միջին հայերենի բառարան: Երևան: ԵՊՀ հրատ.: 2009: 491 էջ:
13. Մարգարյան Ա. Գորիսի բարբառը: Երևանի համալսարանի հրատ.: Երևան: 1975: 565 էջ:
14. Յակոբյան Վ. Յ. Նոր բառարան անգլիերենէ հայերեն: Կոստանդնուպոլիս: Տպ. Յ. Մատթեոսեան: 1907: 949 էջ:
15. Նուասարդեանց Տ. Բառգիրք Արարատեան բարբառի: Տփլիս: Տպարան Մովսէս Վարդանեանցի: 1903: 132 էջ:
16. Նուպարեան Մ. Բառարան ֆրանսերենէ հայերեն: Բեյրութ: Մատենաշար «Ազդակ»: 1955: 1210 էջ:
17. Պարսամյան Կ. Ա. Արմաղան: Վառնա: Տպ. Վզայիմնութ: 1909: մաս Ա: 128 էջ:
18. Պետրոսյան Վ. Զ. Հայկական և հնդեվրոպական երկբարբառային համակարգերը // «ՎԷՄ» համահայկական հանդես: Երևան: 2015: Թիվ 3 (51): էջ 115-127:
19. Զահուկյան Գ. Հայերեն ստուգաբանական բառարան: Երևան: «Ասողիկ»: 2010: 819 էջ:
20. Մարգարյան Ա. Յ. Ղարաբաղի բարբառի բառարան: Երևան: Արցախի պետական համալսարան: 2013: 846 էջ:
21. Մուքիսյան Ա. Մ. Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան: Երևան: ԵՊՀ հրատ.: 2009: 1237 էջ:
22. Վիրգիոս Պ. Մշակականք: Թարգմ.՝ Ա.-Կ. Բագրատունու: Վենետիկ: Ս. Ղազար: 1847: 128 էջ:
23. Քրդերեն-հայերեն: Հայերենի-քրդերեն գործնական բառարան: Կազմ.՝ Կատվայասան Վ. Լ., Աբրահամյան Ա. Ա., Մխիթարյան Գ. Մ.: Երևան: «Ասողիկ»: 2016: 591 էջ:

24. Քումունց Մ., Պետրոսյան Հ. Տաթևի ջրանցքի և նրա հետ կապված մի քանի հարցերի շուրջ // Հայագիտություն Սյունիք: Գիտական նյութերի ժողովածու: 2016: Թիվ 1: 222-234 էջ:
25. Abdalla M. Bulgur - An Important Wheat Product in the Cuisine of Contemporary Assyrians in the Middle East // Oxford Symposium on Food & Cookery. 1990. Prospect Books. P. 19-26.
26. Mallory J. P. In Search of the Indo Europeans (Language: Archaeology and Myth). London. Thames and Hudson. 1989. P. 289.
27. Pokorny J. Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern. "A. Francke". 1959. II band. P. 770.
28. Дагбашьяномъ А. С. Полный русско-армянский словарь. Тифлисъ. Скоропеч. Мнацакана Мартиросянца. 1906. 1224 с.
29. Фасмер М. Этимологический словарь русского языка (перевод с немецкого О. Н. Трубачева: с дополнениями. Под ред. и с предисловием проф. Б. А. Ларина). Москва. "Прогресс". 1986. Том I. 671 с.

Տեղեկություններ հեղինակի մասին

Քումունց Մ. Մ. – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գորիսի պետական համալսարան
Էլ. փոստ prof1972@mail.ru

Տրվել է խմբագրություն 08.10.2019